# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Թեղենիք համայնք, Կոտայքի մարզ, գ. Թեղենիք, 3փողոց,1շենք,
Հեռ. (060) 466492 , teghenik.kotayk@mail.ru

N 126
*26 դեկտեմբեր 2019թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի, Ձեզ ենք ներկայացնում Կոտայքի մարզի Թեղենիք համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 10 արտահերթ նիստ որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Պետրոսյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 33

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 17հոդվածի 1-ին մասի պահանջով, համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Թեղենիք համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 10 արտահերթ նիստի ***օրակարգը***՝

*1)Թեղենիք համայնքում 2020թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին*

2)Թեղենիք համայնքի ղեկավարի 2020թվականի վարձատրության չափը սահմանելու մասին

3)Թեղենիքի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

4)Թեղենիք համայնքի 2020թվականի բյուջեի հաստատման մասին

5)Թեղենիք համայնքի ավագանու 2020թվականի հերթական նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին

6)Թեղենիք համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 42-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

7)Թեղենիք համայնքի 2019թվականի տարեկան աշխատանքային պլանին (ՄԱՊ)հավանություն տալու մասին

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -5

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՋՈՀՐԱԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՈՒՄՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 34-Ն

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին" օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, համայնքի ավագանին ***որոշում է՝***

1.Սահմանել Թեղենիք համայնքի 2020թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը, համաձայն հավելված N1-ի:

2.Սահմանել Թեղենիք համայնքի 2020թվականի տեղական վճարների դրույքաչափերը, համաձայն N2-ի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՋՈՀՐԱԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՈՒՄՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Թեղենիք համայնքղեկավար՝ Մ.Բաղդասարյան
Հավելված 1
Թեղենիք համայնքի ավագանու 2019թվականի
դեկտեմբերի 25-ի N34-Ն որոշման

## Թեղենիք համայնքի 2020թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը

| Հ/Հ | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Օրենքով սահմնված դրույքաչափ | Առաջարկվող դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1. | ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների/ներառյալ՝ոչ հիմնական/ շինարարական/տեղադրման/թույլտվությանտեղական տուրք սահմանվում է՝ | | |
| | Հիմնական շենքերի և շինությունների համար | | |
| 1) | մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/տներինչպեսնաևմինչև 200քմընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար | 15000 | 7500 |
| 2) | սույն կետի „1" ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ | | |
| ա. | 200-ից մինչև 500քմընդհանուր մակերես Ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 30000 | 15000 |
| բ. | 500-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 50000 | 25000 |
| գ. | 1000քմ-ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 50000 | 25000 |
| դ. | 3000-ից և ավելի քառակուսի մետր ունեցող շենքերի և շինության համար | 100000 | 50000 |
| 3) | Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 3000 | 1500 |
| 4) | 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 5000 | 2500 |
| 2. | Համայնքի տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման, վերականգնման, արդիականացման,աշխատանքների/բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | | |
| 1) | Չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ | 3000 | 3000 |
| 2) | Բացի օբյեկտի վերակառուցման, վերականգնման կամ արդիականաց ման աշխատանքներից, նախատեսվում է նաև կառույցների,վերակա ռույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ | | |

| | | | |
|---|---|---|---|
| | կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,բացի սույն կետի,,1"ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար հավելվածի1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով | | |
| 3) | Վերնակառույցների,շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարության կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարա - րության համար հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը | | |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | 0-5000 | 5000 |
| 4. | *Համայնքի տարածքում տեղական տուրքը սահման վում է՝* | | |
| 1) | ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | 0-17500 | 2500 |
| 2) | ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | 1500-17500 | 2500 |
| 5. | Համայնքի տարածքում | | |
| 1) | Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար | 350 | 350 |
| 2) | հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ գազերի առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկաց - ված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | 150000-200000 | 150000 |
| 3) | Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանել | 50000 | 50000 |

| | | | |
|---|---|---|---|
| 6. | Համայնքի տարածքում՝ առևտրի,հանրային սննդի, զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օյեկտները, բաղնիքները/սաունաները/խաղատըները ժամը24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | | |
| 1) | առևտրի օբյեկտների համար | 25000-50000 | 25000 |
| 2) | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 50000-100000 | 50000 |
| 3) | բաղնիքները/սաունաները/համար՝ | 200000-500000 | 200000 |
| 4) | խաղատների կազմակերպման համար | 500000-1000000 | 500000 |
| 5) | շահումով խաղերի կազմակերպման համար | 250000-500000 | 250000 |
| 6) | վիճակախաղերի կազմակերպման համար | 100000-150000 | 100000 |
| 7. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ | | |
| 1) | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 1000-2000 | 1000 |
| 2) | թունդ ալկոհոլային/սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/արտադրանք գովզդող արտաքին գովազդի համար՝ | 2500-3500 | 2500 |
| 3) | այլ արտաքին գովազդի համար՝ | 500-1500 | 1500 |
| 4) | դատարկ գովազդային վահանակների համար՝ | 700 | 700 |
| 8. | համայնքի տարածքից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | 0-10000 | 1000 |
| 9. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականաց - նելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | 0-10000 | 10000 |

Թեղենիք համայնքի ղեկավար՝ Մ.Բաղդասարյան
Հավելված 2
Թեղենիք համայնքի ավագանու
2019թվականի դեկտեմբերի 25-ի
N34-Նորոշման

## Թեղենիք համայնքի 2019թվականի տեղական վճարների դրույքաչափերը

| | | |
|---|---|---|
| 1. | Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանք-ներ կատարելու հետկապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել | 5000 |
| 2. | Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած փոխհատուցման վճար սահմանել | 25000 |
| 3. | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել | 5000 |
| 4. | Աղբահանության վճար,ըստ շնչերի սահմանել ,ամսեկան | 150 |
| 5. | Ոչ կենցաղային և խոշոր եզրագծի աղբի համար սահմանել առավելագույնը | 3000 |
| 6. | Հացեի վերաբերյալ որոշում տրամադրելու համար | 1000 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 35

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, համայնքի ավագանին ***որոշում է՝***

1.Սահմանել Թեղենիք համայնքի ղեկավարի 2020թվականի վարձատրության չափը՝ 281000/երկու հարյուր ութսունմեկ հազար/դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՋՈՀՐԱԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՈՒՄՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 36

## ԹԵՂԵՆԻՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և 34-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջներով, համայնքի ավագանին ***որոշում է՝***

1.Հաստատել Թեղենիքի համայնքապետարանի 2020թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, ***համաձայն հավելվածի:***

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԶՈՀՐԱԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՈՒՄՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Հավելված

Թեղենիք համայնքի ավագանու

2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 36-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 5։

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Պաշտոնի ծածկագիր | հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ, ՀՀդրամ | Հավելում | Հավելավճար | Աշխատավարձի չափը, ՀՀդրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | **Քաղաքական պաշտոններ** | | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | | 1 | 281000 | | | 281000 |
| | **Համայնքային ծառայության հաստիքներ** | | | | | | |
| 2 | Աշխատակազմի քարտուղար | 1.2-1 | 1 | 150000 | | 10350 | 160350 |
| 3 | առաջատար մասնագետ-օպերատոր | 3.1-1 | 1 | 145000 | | | 145000 |
| 4 | առաջատար մասնագետ | 3.1-2 | 1 | 145000 | | 10000 | 155000 |
| | **Տեխնիկական սպասարկման անձնակազմ** | | | | | | |
| 5 | Պահակ-այգեպան | | 1 | 90000 | | | 90000 |
| | **Ընդամենը** | | **5** | **811000** | | **20350** | **831350** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 37-Ն

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,,Բյուջետային համակարգի մասին" օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, համայնքի ավագանին ***որոշում է՝***

1.Հաստատել Թեղենիք համայնքի 2020թվականի բյուջեն՝ եկամուտների և ծախսերի գծով

2.Հաստատել 2020թվականի բյուջեի եկամուտները, ըստ առանձին եկամուտների՝ համաձայն հավելված N1-ի

3.Հաստատել 2020թվականի բյուջեի ծախսերը, ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հավելված N2-ի

4.Հաստատել 2020թվականի բյուջեի ծախսերը, ըստ տնտեսագիտական դասակարգման, համաձայն հավելված N3-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԶՈՀՐԱԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՈՒՄՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 38

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՕՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թեղենիք համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 16-ի ընդունած կանոնակարգի պահանջները, համայնքի ավագանին ***որոշում է՝***

1.Հաստատել 2020թվականի ընթացքում Թեղենիք համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը՝ հունվարի 15-ին, մարտի 13-ին, մայիսի 13-ին, հուլիսի 13-ին, սեպտեմբերի 11-ին, նոյեմբերի 11-ին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՋՈՀՐԱԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՈՒՄՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 39-Ն

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով, համայնքի ավագանին ***որոշում է՝***

1.Թեղենիք համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 18-ի ,,Թեղենիք համայնքի 2019թվականի բյուջեի հաստատման մասին"թիվ 42-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները, ***համաձայն հավելվածի***

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՋՈՀՐԱԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՈՒՄՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Հավելված

Թեղենիք համայնքի ավագանու

2019թվականի դեկտեմբերի 25-ի

Թիվ 39-Ն որոշմամբ

| Ծրագիր | հոդված | Հոդվածի անվանումը | 25/12/2019թ | Ավելացում/ +/կամ պակասեցում | Ճշտված բյուջե |
|---|---|---|---|---|---|
| 1.1.1 | 4221 | Ներքին գործուղումներ | 6.0 | -6.0 | 0.0 |
| 1.1.1 | 4252 | Մեք և սարքավ ընթացիկ նորոգում և պահ | 6.0 | +6.0 | 12.0 |
| | | Ֆոնդային բյուջե | 0.0 | 7206.9 | 7206.9 |
| 8.2.3 | 5113 | Շենքշին կապիտալ վերանոր | 7206,9 | -7206.9 | 0.0 |
| 8.2.3 | | Ֆոնդային բյուջե | 0.0 | 595.5 | 595.5 |
| 8.2.3. | 5112 | Լուսավորության ցանցի անցկացում | 595.5 | -595.5 | 0.0 |
| | | Ընդամենը | 7814.4 | 0 | 7814.4 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 40

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻՆ (ՄԱՊ) ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 13հոդվածի 10մասի պահանջով, համայնքի ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ Թեղենիք համայնքի 2019թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՄԱՊ):

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՋՈՀՐԱԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՈՒՄՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ